

Փրդիքական բոլոր երեւոյթները կը վերածէ ու կը վերադրէ հոսակ սեռային բնադրին (էջ 405): Չափազանցութիւն մը եւ յայտնի սխալ մըն է ասիկա եւ հակառակ ողջամբող տրամաբանութեան. նիւթին եւ հոգեկանին էական տարբերութեամբ ամենեւին չի զբաղիր հեղինակը:

Գրախօսականի մը հակիրճ տողերը չեն թոյլատրեր մեզի զբաղելու ատենց մանրամասն հերքումով: Կը ցաւինք սակայն յայտարարելու՝ որ բժիշկ Իս. Տէրտէրեան անտեղեակ է քրիստոնէական բարոյականի էական տարբերուն. այսպէս կ'անդիտանայ թէ քրիստոնէութիւնը ինչքան աղնուացուցած է սէրը, եւ ամուսնութիւնը բարձրացուցած է նուիրական ու շնորհաբեր Ս. Խորհուրդի մը, տալով անոր աստուածային դրոշմ: Ըստ Տէրտէրեանի, այսպէս չէ եղած քրիստոնէութեան սկիզբները, այլ՝ յետ երկար փորձառութեան, Եկեղեցին անդրադարձ է «մի օր էլ պսակը յայտարարել սուրբ» (էջ 395). ինչ որ յայտնի սխալ է, վասնզի ամուսնութեան խորհուրդին հիմնադիրն է Քրիստոս, ըստ Ս. Աւետարանին: Եւ իրականին մէջ, եկեղեցական առաջին զրիչները ո՛չ թէ կնատեաց են եւ ամուսնութեան դէմ կը պայքարին, այլ կը մաքառին ապօրինի, անկարգ եւ անառակ սիրոյն, եւ անոր հետեւանքով ծնած՝ ցոյի եւ հեշտակեաց արարքներու դէմ, որոնք մնացորդներն էին հեթանոսութեան աղտեղի զաղրութիւններուն:

Բժ. Տէրտէրեան իր մարդէն դուրս է ելեր այս հարցերու քննութեան մէջ. հարցեր՝ որոնք բժշկական ընդունարանի մը կամ վիրաբուժական սրահի մը մէջ չէ կարելի ուսումնասիրել, ինչպէս չէ կարելի փորձառապէս տեսնել հոգեպաշտ փրկութեամբ թափանցած բոլոր եզրակացութիւնները:

~ ~ ~

ԾԱՏՈՒՐ ՊԵՐՊԵՐԵԱՆ. — Խաչին ամբարան: Դրուագներ 1915-1925: Փարիզ, տպ. Տէր Յակոբեան, 1955, էջ 166:

Եթէ չենք սխալիր, 1955ի առաջին զիւրքն է, ձօնուած մեծ աղէտի քառասնամեակին: Հեղինակին ալ անդրանիկ երկը: Տարադրութեան եւ չարչարանքի վկայ մը ինքն ալ, ինչ աւելի արժէքաւոր նուէր կրնար տալ իր մարտիրոս ժողովուրդին:

Տասնեութը պատմութեան քննարկ, ուր կը դժուին կմախացեալ պատկերները սովորական ու տանջուած հայորդիներու, խոշտանգուած կոյսերու, մերկ ու բոլորիկ որբուկներու. բայց նաեւ հերոսութեան մայրերու եւ վրիժառու հայրերու: Թատերաբեմը այս ողբերգութեան՝ Խարբերդն ու Փոքր Ասիան է:

Գրական ոճ կամ մշակում աւելորդ է փնտռել այս հատորին մէջ: Պարզ, բնական եւ ինքնաբերական պատկերներ են: Հեղինակն ալ շատ համեստօրէն եւ առանց յաւակնութեան, կը հրատարակէ զայն իրեն առաջ, իրեն մէկ էջը այն արիւնոտ անցեալին, զոր ապագայ վիպագիրը պիտի հրատարակէ Մեծ Եղեռն անունով: Եւ անշուշտ պիտի չուանայ այդպիսի կարեւոր հատոր մը, յաջորդ տասնամեակի ընթացքին, բաղձաթիւ աշխատակիցներու կազմակերպութեամբ:

Գեղեցիկ է կողքին նկարը. վարդապոյն խորքի մը վրայ, կարմիր ուղի մը. աջակողմը՝ կիսաքանդ սիւններ, որոնց ստուերները խաչեր կը դնեն ճամբուն վրայ. ճախին՝ նոճիներու շարք մը. բոլորը կը հեռանայ ու կ'անհետի խորութեան մէջ: Նկար՝ Մ. Քէլապաճեանի: Ապրիլեան խորհուրդին արժանաւայել պատկերացում մը:

Կը սպասենք Հեղինակին հրատարակելի յաջորդ տասը երկերուն:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՆԱԽԱԳԱՀ ՎՍԵՄ. ԲԱՍԻԼ ԵԱՍՈՐԵՆ

Ս. ՂԱԶԱՐԻ ՄԷՁ

(28 ՄԱՐՏ 1955)

Լիբանանի Հանրապետութեան Նախագահը, Մարտի վերջերք, պաշտօնական այցելութեամբ պատուեց Խաչինոյ կառավարութիւնը: Հոսի ու վատիկանի չքեղ ընդունելութիւններէն վերջ, իր այցելութիւններու զխաւոր հանգրուաններն եղան Ֆիրենցէ, Վենետիկ ու Միլան:

Մարտ 27ի իրիկունք, բաղձաթիւ հետեւորդներով՝ կու գար ողջունելու Ազրիականի հինաւորեց Դիւան: Քաղաքական ու եկեղեցական անձնաւորութիւններու կարգին, կայսրան փութացած էր նաեւ Միւսթաֆա Քալմաշի մը վարդապետներ, Մուրատ-Ռափայէլեան վարժարանի Տեսչութիւնն ու աշակերտները, ներկայացնելու համար բարի դալուստի շնորհաւորութիւններն ու մեծարանքի առաջին ցոյցերը:

Յաջորդ առաւօտ կանուխ (Մարտ 28) ծայր տունին այցելութիւնները: Ու նախ Դիւանի չքեղ պալատը, Ս. Մարկոսի տաճարը եւ դիւթիչ հրապարակը: Այս շոգեմակոյկով առաջին պտոյտը լճակին վրայ, դէպի Ս. Ղազար: Առաւօտեան ժամը 11ն էր:

Ընդհանուր ողբերգութեան, հանդիսաւոր զօղանջներու եւ ծափողջոյններու մէջ՝ Միւսթաֆա Քալմաշի հայ հողին վրայ կը կոխէր Վսեմ. Նախագահը իր ազնիւ Տիկնոջ հետ. կը հետեւէին Լիբանանի Արտաքին Գործերու Նախարար՝ Պր. Ալֆրէտ Նաքբաշ եւ Տիկնիւր, Ելեմուտի Նախարար՝ Պր. Մուհիթտին Նուրի եւ Տիկնիւր, Հանրապետ. Նախագահութեան Դիւանապետ՝ Պր. Ժօրժ Հայմարի, Նախարար Լիպոթ՝ Պր. Նիքոլա Պուսթրոս, Մամուլի Ընկերութեան Նախագահ՝ Պր. Ռոպէր Ապէլա, Գնդապետ Լապաքի, Տեղակալ Տէրմիշ, Օր. Ռոպա Մաթար՝ քարտուղար Տիկնի Շամունի, եւ ուրիշներ, կազմելով գեղե-



Վսեմ. Քալմաշի Շամուն, իր ազնիւ Տիկնիւր, Ուստիս Գերայ. Արքայադուռ, բարձրատիպան շէնքերը՝ վաճառքի մուտքին, ծաղկազարդ Սոսոսիան սրահին մէջ:

ցիկ շքախումբ մը, քսանի չափ անդամներով:

Գերայ. Արքայադուռն ու բոլոր Հայերը իրենց յարգալի մեծարանքը կը ներկայացնէին, մինչ հանդիսաւոր թափօրը կը մտնէր վանքի սեմէն ներս: Սիւնապարդ քառանկուն իր դիւթական պարտէզով կը զրաւէր իսկոյն բոլորին ուշադրութիւնը: Ի տես լիբանանեան հսկայ ու թեւատարած մայրիկին՝ Տիկ. Շամուն կը զոչէր ժպտալին. «Ուրեմն փոքրիկ Լիբանան»



Վսեմ. Քամիլ Շամուն՝
Լորտ Պայրընի սենեակին մէջ:

մըն է հոս »: Կայցելեն եկեղեցին: Աւանդաւոր մէջ հետաքրքրութեամբ կը զննեն աստիճանը ու ոսկեղնապակ արժէքաւոր շուրջաններ, սարկաւազի շապիկներ: Գնահատանքի արտայայտութիւններով՝ հիւրերը կ'առաջնորդուին թանգարան: Լորտ Պայրընի սենեակը խոր տպաւորութեամբ կը համակէ զամէնքը:

Պաշտօնական ընդունելութիւնը տեղի ունեցաւ Մեծ Մատենադարանի դահլիճին մէջ: Մինչ Վսեմ. Նախագահը իր հետեւորդներով կը բարձրանար աստիճաններէն, վանքի աշակերտները, դաշնակի բնակեցութեամբ՝ խանդավառօրէն հնչեցունէին Լիբանանեան արդալին քայլերը: Հիւրերը հաղիւ բաղկաթոսներու վրայ տեղաւորուած, վանքի արարողէտ միաբաններէն մէկը, Ե. Արիստակէս Մանուկեան, արարելէն լեզուով՝ բարի գալուստի ուղերձ մը հիւանք:

« Բացառիկ պատիւը — ըսաւ ան — որ Ձեր ներկայութեամբ կ'ընէք մեզի, մեր սրտերը կը լեցնէ անսահման ուրախութեամբ: Եւ հոս, Ս. Ղազար կղզիէն մէջ, կրնանք ըսել թէ Դուք կը գտնուիք

Լիբանան: Վսեմի եթէ ճիշտ է որ ամէն անկիւն ուր սիրտ մը կը բարախէ Լիբանանի սիրով՝ փոքրիկ Լիբանան մըն է, հոս Ս. Ղազար առաւելապէս ալ կը ջանի անկիւններէն մէկն է, որովհետեւ բողոքով սրտեր կան այստեղ ալ պիտի զգացունենք զամառուած: Ստուգիւ Միթարեան Հայրերէն եւ աշակերտներէն շատեր պատիւ կը զգան Լիբանանեան հպարտակ ըլլալու:

Միւս կողմէ, կրնանք մոռնալ այն ազնիւ երկիրը, որ իր դռները լայնօրէն բացաւ քանի մը հարիւր հազարաւոր Հայերու առջեւ: Կրնանք միթէ մոռնալ այն ջերմ ստանձականութիւնը, զոր ան ցոյց տուաւ Հայերուն հանդէպ, չորհելով անոնց քաղաքացիութեան ամէն իրաւունք, կրնանք ան քաղաքական, մշակութային, դեղարուեստական եւ առեւտրական մարզերու մէջ: Շնորհիւ այս վեհանքն նկատողութեան է որ Լիբանան բնակող Հայերը, սփիւռքի իրենց եղբայրներէն կը ճանչցուն իրեն ամէնէն կարեւոր, ամէնէն ծաղկեալ եւ ամէնէն երջանիկ զաղութիւններէն մէկը:

Ահա թէ ինչո՞ւ լուրը Հայերը Լիբանանի հանդէպ կը տածեն երախտադրութեան ամենախորին զգացումներ:

Շատ առիթներու եւ հանդիսաւոր պարագաներու մէջ, Վսեմ. Միթ. Աղաճանեան եւս, մեր Գերեջանիկ Պատրիարքը, փառաբանած է Լիբանանի վեհանքն Կառավարութիւնը, եւ արդար հպարտութեամբ, ինքզինքը յայտարարած է, լուրը հայազարմ Լիբանանցիներու հետ, ամէնէն երջանիկ զաւակները Լիբանանեան Հայրերիքին, որուն ցմիշտ կը մնան կապուած ու խորապէս երախտաւոր, մահու եւ կենսոյ չափ: Լիբանանի Կառավարիչները, ժողովուրդն ու մամուլը մեծապէս զգացուեցան այս յայտարարութիւններէն եւ մեծ գոհունակութեան տողեր արձանագրեցին:

Վսեմաշուք Տէր, Դուք Ձեր այս այցելութեամբ կը պատուէք այսօր Ս. Ղազարը, որ երկուքուկէս դար առաջ, լսկ աննշան բոցոտանոց մըն էր, ու միայն Մատային Աստուծոյ՝ Միթար Արքայի, Միարանութեան Հիմնադրին, եւ անոր անխնայ յաջորդներուն արիական ջանքերը եւ անստան հաւատքը ստեղծեցին այսօրուան ծաղկեալ մեծաւոր, գարձնելով զայն հաւատքի եւ մշակոյթի մշտապես կեդրոն մը: Լիբանանն ալ ասե՛նք արեւակէզ ու ժայռոտ լեռնաշղթայ մը չէ՞ր միթէ, որ Լիբանանցի ժողովուրդին քաջութեամբ, յարատեւութեամբ, իմաստութեամբ ու զոհողութիւններով զգացաւ առիթնող հմայքը այն երկրին, ուրկէ ԵՐԳ՝ ԵՐԳՈՅ՝ փեսային սիրական հարսը պիտի ժամանէր: Այս համեմատական խորհրդածութիւնը ահա կը ներշնչէ մեզի նաեւ այն



Վսեմ. Քամիլ Շամուն կ'արձանագրէ. « Nous avons été très heureux de nous retrouver à Venise sur un coin de terre libanaise, respirant un climat Libanais et animé du plus pur sentiment de la Mère Patrie ».

մաղթանքը զոր կ'ըզմանք այս հանդիսաւոր պահուն ուղղել Ձեզի, որ արժանաւոր ներկայացուցին ու Գլուխն էք Լիբանանի:

Երանի թէ մեր սիրելի եղբայրները, որ հաստատուած են այդ օրհնեալ երկրին մէջ, ուր Մեթարեան Միարանութիւնն ալ լախաւոր է լինելու ունենալու Պրֆֆայայի գեղատեսիլ բարձունքներուն վրայ, կարենային, միացած Լիբանանցի եղբայրակիցներու հետ, Հայրերիքին ի սպաս դնել ինչ որ են եւ ինչ որ ունին, որպէսզի Լիբանան պահէ փառքը զոր դարերն են երգած, եւ բարգաւաճի յաւիտեական մայրիներուն հովանիին ներքեւ (պատկեր տառուածային պահապանող Նախախնամութեան), եւ իր ամենասիրելի Նախագահին, Վսեմ. Քամիլ Շամունի աշաւորջ կառավարութեան տակ »:

Ապա խօսք առնելով Ուխտիւ Ընդհ. Արքահայրը, Գերայ. Սրապիոն Վրդ. Ուլուհոճեան, Փրանսերէն լեզուով ըսաւ.

« Միթարեան Միարանութիւնը մեծ պատիւ կը համարի այսօրուան Ձեր այցելութիւնը: Արդարեւ, Ս. Ղազար կղզին, որորանը Հայ Մշակոյթի,

բողոքով բարձրատիճան անճանալութիւններ հիւրընկալած է իր յարկին տակ. կայսրներ, թագաւորներ, իշխաններ, արուեստագէտներ եւ ահաւոր գիտնականներ: Բայց Ձեր այցելութիւնը բացառիկ կերպով կը խօսի մեր սրտերուն, որովհետեւ Լիբանանը մեզի համար երկրորդ Հայրերիք մըն է, ուր կ'ապրին տանակ հազարաւոր Հայեր, անոնք ու ապահով, կատարեալ ազատութեան մէջ, վայելելով քաղաքացիական ամէն իրաւունք. եւ ասիկա, չորհիւ Ձեր հիւրընկալ ու բարեխնամ Կառավարութեան: Դարաւոր կապեր Լիբանանն ու Հայ ազգը իրարու կը զօղեն, երկու հազար տարիէ ի վեր, Մեծ Տիգրանի օրերէն ըսկըսած: Ժամանակի ընթացքին, մեր զոյգ ժողովուրդները պաւստութեան մէջէն կողք կողքի քալած են, յաճախ միեւնոյն ճակատադրով:

Երբեմն, Սողոմոն թագաւորի օրով, Լիբանան երուսաղէմի տաճարի շինութեան հայթայթեց իր չքնաղ եւ զեղուղէ մայրիներու փայտերը. այսօր Միթարեաններու զօրքն կը նպաստէ Ս. Ղազար կղզիով պատանի ընծայացուներ. ահաւասիկ, ասո՛նք, որ Ձեզ շրջապատած են խանդավառ սիրով ու յարգանքով: Հաճելի է ինձի, ուրեմն,



Վսեմ. Նախագահը՝ մեկնումի պահուն:

այս առթիւ, առանձնապատուկ կերպով յայտնել մեր համակրանքն ու մեր խորին երախտագիտութիւնը հանգէպ Ձեր անձին եւ Ձեր երկրին»:

Ամէնէն վերջ, խանդավառ ծափերու մէջ ոտքի կանգնեցաւ Վսեմ. Նախագահը, եւ յուզուած՝ փոխադարձեց այսպէս.

« Երջանիկ եմ Ս. Ղազար կատարած այս այցելութեամբս, վասնզի հոս գտայ Լիբանանի մէկ մանրանկարը, ուր կը շնչէ արեւելեան ջերմ մրբնոյրտ մը, ամենամուրր զգացումներով, հանդէպ Լիբանանի: Ճառ մը չէ որ պիտի խօսիմ. ժամանակն ալ արդէն քոյլ չի տար: Բայց կ'ուզեմ այս յարկէն հեռանալու պահուս, յայտնել իմ խորին գոհունակութիւնս եւ անկեղծ շնորհակալութիւնս, այս հիանալի հիւրասիրութեան համար: Կը մտաբերեմ ի սրտէ յաջողութիւն, բարգաւաճում եւ բարօրութիւն Միխրաբեան Միքայէլեան, ուր կը մեծնան մեր սղաքը, Աստուծոյ եւ Հայրենիքի սիրով »:

Յուզիչ էր յաջորդող պահը, երբ լուսանկարիչներու շրջիկ փայլակներու տեղատարաւին տակ, Վսեմ. Նախագահը վանքի Ոսկեմատեանին մէջ կը դրոշմէր յիշատակի ու զնահատանքի թանկագին տողեր: Ստորագրեցին նաեւ բարձրատիրճան հետեւորդները:

Արեւելեան վարդանոյշով եւ ըմպելիով պատրաստուած համեստ հիւրասիրութիւն մը եկաւ աւելի մտերմական քաղցրութեամբ օծելու այս փոքրիկ հանդէսը:

Հուսկ հիւրերը առաջնորդուեցան դիտելու առանձին սեղանի վրայ ցուցադրուած մազադաթեայ հին Աւետարաններ, Հայ Մանրանկարչութեան արուեստի նմուշներ, Ֆիրտուսի եւ Սաատի պարսկերէն յարդի ձեռագիրներ, արարելէն լեզուով Ս. Ղազարեան հրատարակութիւններ: Այդ պահուն էր որ, Լիբանանցի հետեւորդներէն Տիկին մը, մօտենալով մեզի՝ մտերմարար տեղեկութիւններ ուղեց Վանքի աշակերտներու մասին եւ յարեց. « Երբ այս փոքրիկները Լիբանանեան քայլերդը կ'երգէին, այդքան խանդավառ ու ջերմ շեշտով, կարծէք ուրախութենէս եւ յուզումէս պիտի լայի... »:

Արդարեւ բոլորին համար ալ անակնկալ մը եղած էր այս ընդունելութիւնը, որ թէպէտ երազային թուէր, արդէն իսկ կը սահէր, բայց անմոռանալի յիշատակ մը դրոշմած էր ամէն սրտի մէջ: Մինչ անդին, դարձեալ ուրախ ծափերու մէջ, հրաժեշտի սիրալիւր խօսքերէ վերջ, Վսեմ. Նախագահը կը մեկնէր իր հետեւորդներով:

Ահա պատմական փառաւոր էջ մըն ալ Ս. Ղազարի տարեգրութեանց մէջ. պատմական նշանակելի եղելութիւն մը, որ կուզայ անգամ մը եւս ցուցադրելու այն սերտ կապը որ զոյգութիւն ունի Լիբանանի եւ տարալիւր Հայ Ժողովուրդին միջեւ, եւ այն երախտագէտ զգացումները, որոնք կը բղխին Լիբանանահայ սրտերէն ընդմիշտ: Միաժամանակ անուրանալի զնահատանք մըն է այս, Հայ դարաւոր արժէքներուն եւ Միխրաբեան Հայրերու անխոնջ վաստակներուն:

Հ. Ն. Տ. Ն.



ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հալէպէն, ՊԲ. ՍՈՒՐԷՆ ՆԱԶԱՐԵԱՆ, Նախկին սան տեղւոյն Միխրաբեան վարժարանին, սիրարժար կը նուիրէ Ս. Ղազարու Միխրաբեան Մատենադարանին՝ Արեւելք օրաթերթի ամբողջական շարքը, առաջին թիւէն սկսած, կազմուած: Արեւելքէն կը խոստանայ նաեւ տարւել տարի յաջորդաբար լրացնել միեւնոյն շարքը: Մատենադարանիս վարչութիւնը կը յայտնէ իր խորին շնորհակալութիւնը, մեծապէս զնահատելով նուիրատուն այս ազգօգուտ ձեռնարկը:

ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԱՊԵՏ

ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱԾ ԵՆՔ

ԱԹԱՆԱՍԵԱՆ ԽԱԶԻԿ ՎՐԳ. - Աւետում: Պէյրութ, Հայ կթղ. տղ. 1954, էջ 22:

ԱԹԱՆԱՍԵԱՆ ԽԱԶԻԿ ՎՐԳ. - Գողգոթա: Պէյրութ, Հայ կթղ. տղ. 1954, էջ 16:

ԱՆԵՆԼ. - Պարը յոյսին: Երուսաղէմ, տղ. Սրբոց Յակոբեանց, 1955, էջ 95:

ԱՐԱՍ ՀԱՅԿԱԶ. - Յեղիմ Զայնը. Երկրորդ Հատոր: Նիւ Եօրթ (Հայ կթղ. տղ. Պէյրութ), 1954, էջ 317:

ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ ՇԱԽԱՐՇ ՎՐԳ. - Քննութիւն 1941-ի կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ «Կանոնադրութեան»: Պէյրութ, տղ. Կ. Տօնիկեան, 1955, էջ 128:

ԳՕՇ Յ. - Կրակէ շապիկի մէջ: Երուսաղէմ, տղ. Սրբոց Յակոբեանց, 1955, էջ 156:

ԳՈՒՐԵԱՆ ՊԵՏՐՈՍ. - Քերքուածներ եւ նամակներ (Ծննդեան հարիւրամեակի տոթիւով): Պէյրութ, տղ. Խալան, 1952, էջ 76: (Նուէր Հրատարակչէն):

ԹԵՒԵԱՆ ՎԱՀԱՆ. - Հատընտիր: Պէյրութ, տղ. Խալան, 1954, էջ 144: (Նուէր Հրատարակչէն):

ԹՈՒՄԱՆԵԱՆ ՅՈՎՀ. - Անուշ: (Բ. տղադրութիւն: Մահուն 30-ամեակին տոթիւով): Պէյրութ, տղ. Խալան, 1953, էջ 48: (Նուէր Հրատարակչէն):

ԻՇԽԱՆ Մ. - Երեմ Մեծ Հայեր: Պէյրութ, տղ. Խալան, 1952, էջ 98: (Նուէր Հրատարակչէն):

ԻՍԱՀԱԿԵԱՆ ԱԻՆԵՍԻՍ. - Իմ յուշերից: Պէյրութ, տղ. Խալան, 1955, էջ 97: (Նուէր Հրատարակչէն):

ԼԱՄԱՐՏԻՆ. - Փունջ մը քերքուած Լամարտիկի խոհամանրէն եւ Գաշնակութիւններէն քաղուած... խաչիկ Վրդ. Աթմասեանի կողմէն: Պէյրութ, Հայ կթղ. տղ. 1955, էջ 48:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԵՆ Ն. ՓԱԼԱՆՃԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՔԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ 1929-1954: Պէյրութ, տղ. Համազգ. Ընկերութեան, 1954, էջ 256:

ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՌՔ. - Կեանքն ու գործը: Նախաձեռնութեամբ Յիւնամեայ Յարկեանի Տիկ-

նանց Յանձնախումբի: Իսթանպուլ, տղ. Վարդ, 1954, էջ 415:

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԱՐՓԻԱՐ. - Փունջ: Յրեղոյ - Քալիֆուրիա, 1952, էջ 120:

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԱՐՓԻԱՐ. - Ծաղկանց փունջ: Յրեղոյ, տղ. Նոր Օր, 1954, էջ 237:

ՄՈՒՇԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎՐԳ. - Հայ կեդրոն Տարեգր. 1955: Պաշտոն Այլէս, տղ. Արարատ, 1955, էջ 335:

ՆԱՅԻՐԻ Ս. - Մեր գաղափարական խնդիրներից: Լոս Անջելէս, տղ. Գրամարտիկ-ի, 1955, էջ 48:

ՆԱԻՐԵԱՆ ԱՍԱՏՈՒՐ. - Հաւատք եւ լոյս (Վարդապետական էջեր): Երուսաղէմ, տղ. Սրբոց Յակոբեանց, 1954, էջ 271:

ՇԻՐԱԶ ՅՈՎՀԱՆՆԵՍ. - Սիամանթօ եւ Խաչեղաբէ: Պաշտ: Պէյրութ, տղ. Խալան, 1955, էջ 59: (Նուէր Հրատարակչէն):

ՉԱՐԽՈՒՏԵԱՆ ՆՈՒՊԱՐ. - Օրօք դիակներու համար: Պէյրութ, տղ. Արամազդ, 1955, էջ 81:

ՊՈՂԱՐԵԱՆ ՆՈՐԱՅՐ ԵՊՍ. - Մայր Յուդակ Զնազրաց Սրբոց Յակոբեանց: Երկրորդ Հատոր: Երուսաղէմ, տղ. Սրբոց Յակոբեանց, 1954, էջ 309 (մեծադիր):

ՏԱՐԵԱՆ ԱՏՐԻՆԷ. - Այսպէս մեծցան անոնք...: Թատրերգութիւն 4 արար: Իսթանպուլ, տղ. Վարդ, 1954, էջ 80:

ՏԵՐՈՒՆԻ ՅԱԿՈՒՐ. : Կեանք եւ Խաչեղաբէ: Պաշտ: Մոզլէն, 1955, էջ 167:

ՏԵՐՏԵՐԵԱՆ ԲԺ. ԻՍԱՀԱԿ. - Եղիբ քո բծիշկը: Երկերի ժողովածու, Հիւնդերոյ Հատոր: Թեհրան, տղ. Մոզլէն, 1954, էջ 619:

ՏԻՐԱԶԱՆ ԱՐԵՒ. - Գաղանք Աստուած մը կ'ուզէ (վէպ): Իսթանպուլ, տղ. Այլէս, 1955, էջ 176:

MÉCÉRIAN JEAN, S. J. - La Vierge Marie dans la littérature médiévale de l'Arménie. Grégoire de Narek et Nersès de Lampron. - Collection Arménologique. N° 1. Beyrouth, Publication de l'Institut de Lettres Orientales, Université St. Joseph. 1954, pg. 47.